*Հավելված N 1*
*ՀՀ ֆինանսների նախարարի 2021 թվականի*
*հունիսի 29-ի N  323-Ա  հրամանի*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրի մասին

**«Շտապբուժօգնություն» ՓԲԸ**-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար **աուդիտորական ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՇԲՕ-ԳՀԾՁԲ-24/6»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 22/02/2024թ-ին կնքված №«ՇԲՕ-ԳՀԾՁԲ-24/6» պայմանագրերի մասին տեղեկատվությունը՝

| | **Գնման առարկայի** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **չափաբաժնի համարը** | **անվանումը** | **չափման միավորը** | **քանակը[1]** | | **նախահաշվային գինը** | | **համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)** | **պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)** |
| | | | | | **/ՀՀ դրամ/** | | | |
| | | | **առկա ֆինանսական միջոցներով[2]** | **ընդհանուր** | **առկա ֆինանսական միջոցներով[3]** | **ընդհանուր** | | |
| 1 | Աուդիտորական ծառայություններ | դրամ | | 1 | | 2000000 | **2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար «Շտապբուժօգնություն» ՓԲ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայության գնման**<br>Աուդիտորի կարծիքը ներառող Ֆինանսական եզրակացությունը և ղեկավարությանն ուղղված նամակը «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ին պետք է տրամադրվեն ոչ ուշ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 2 ամսվա ընթացքում:<br>**Աուդիտ իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ պայմաններին:**<br>1) Պետք է գրանցված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ի ռեեստրում:<br>2) Առողջապահական առնվազն 3 կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 3 տարվա փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա՝ **(http://www.accountancyage.com/ststic/top50this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0)** կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ,<br>3) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա առողջապահական ոլորտի կազմակերպությունների աուդիտի մասնակցության առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և փորձի ընթացքում առնվազ 3 առողջապահական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորում (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, Սի-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ), որակավորումը հավաստող փաստաթուղթ,<br>4) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենան աուդիտորական կազմակերպությունում աշխատանքի և առողջապահական ոլորտի կազմակերպությունների աուդիտի մասնակցության առնվազն 3 տարվա փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, Սի-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում:<br>**Աուդիտի Նպատակը**<br>«Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին հնարավորություն տալ կարծիք հայտնելու ըստ Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի **(ՀՀՄՍԽ)** կողմից հրապարակվող Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (**ՖՀՄՍ**) հիման վրա կազմված Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:<br>Ըստ **ՀՀՄՍ 1**-ի Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է հետևյալ բաղադրիչները.<br>(ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ տարվա վերջի դրությամբ,<br>(բ) շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն՝ տվյալ տարվա համար համար,<br>(գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ տարվա համար,<br>(դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ տարվա համար,<br>(ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից, ինչպես նաև համաձայն **ՀՀՄՍ 1**-ի՝ նախորդ ժամանակաշրջանի վերաբերյալ համադրելի տեղեկատվություն:<br>«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի հաշվապահական գրանցումները, որոնք կատարվում են ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով, հիմք են հանդիսանում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:<br>**Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման պատասխանատվությունը**<br>Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, ներառյալ տեղեկատվության բավարար բացահայտումը, պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Սա ներառում է համարժեք հաշվապահական գրառումների պահպանումը և ներքին հսկողության իրականացումը, հաշվապահական քաղաքականության ընտրությունն ու կիրառությունը և ընկերության ակտիվների պահպանումը: Որպես աուդիտի գործընթացի մաս՝ աուդիտորները պետք է ղեկավարությունից պահանջեն և ստանան գրավոր հաստատում՝ աուդիտի իրականացման փաստի վերաբերյալ:<br>**Ծառայությունների ծավալը**<br>Աուդիտը պետք է իրականացվի Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի **(ՀՄՖ)** Աուդիտի և հավաստիացման ստանդարտների միջազգային խորհրդի հրապարակած Աուդիտի միջազգային ստանդարտների **(ԱՄՍ)** համաձայն: Այդ ստանդարտները պահանջում են, որպեսզի աուդիտորն աուդիտը պլանավորի և իրականացնի այնպես, որպեսզի ստանա բավարար հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները զուրկ են նշանակալի անճշտություններից: Աուդիտի ընթացքում ընտրանքային եղանակով ուսումնասիրվում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարներն ու բացահայտումները հիմնավորող փաստերը: Աուդիտը ներառում է նաև ներքին հսկողության վերաբերյալ ուսումնասիրություն՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգերի մշակման համար, և ոչ՝ Պատվիրատուի ողջ ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք հայտնելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև օգտագործված հաշվապահական սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված հիմնական գնահատականների գնահատումը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:<br>ԱՄՍ-ին համապատասխանությունն ապահովելու ընթացքում աուդիտորը հատկապես պետք է ուշադրություն դարձնի հետևյալ խնդիրներին, ներառյալ՝ պետական ոլորտի մարմիններին վերաբերող հատուկ նկատառումները.<br>ա) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 240-ի (աուդիտորի պատասխանատվությունը՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում խարդախության դեպքերի առնչությամբ)՝ աուդիտի պլանավորման և իրականացման ընթացքում աուդիտի ռիսկը մինչև ընդունելի մակարդակը նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է հաշվի առնի խարդախության պատճառով ֆինանսական հաշվետվություններում տեղ գտած նշանակալից անճշտությունների ռիսկերը:<br>բ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 250-ի (Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը)՝ աուդիտի գործընթացի պլանավորման և իրականացման, ինչպես նաև արդյունքների գնահատման և ներկայացման ժամանակ աուդիտորը պետք է հաշվի առնի, որը կառույցի կողմից օրենքների և կարգավորման դաշտի պահանջների չկատարումը կարող է էապես ազդել ֆինանսական հաշվետվությունների վրա: Մասնավորապես՝ աուդիտորը պետք է ուսումնասիրի առողջապահության ոլորտը կարգավորող իրավական ակտերը (որտեղ որ վերջիններս կիրառելի են):<br>գ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 260-ի (Հաղորդակցումը կառավարման օղակներում գտնվող անձանց հետ)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ ընկերության կառավարման մարմնին պետք է տեղեկացնի կառավարչական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների մասին:<br>դ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 265-ի (Ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին տեղեկացումը կառավարման օղակներում գտնվող անձանց և ղեկավարությանը)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ ներքին հսկողության համակարգում հայտնաբերված թերությունների մասին պետք է պատշաճ կերպով տեղեկացնի կառավարման և ղեկավարման համապատասխանատուներին:<br>ե) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 330-ի (Աուդիտորի գործողությունները գնահատված ռիսկերի առնչությամբ)՝ Աուդիտի ռիսկն ընդունելի մակարդակի նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է որոշի իր | |

---

*1 Լրացվում է կնքված պայմանագրով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը*
*2 Լրացնել տվյալ պայմանագրի շրջանակներում առկա ֆինանսական միջոցներով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը, իսկ պայմանագրով նախատեսված ընդհանուր ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:*
*3 Եթե տվյալ պայմանագրի շրջանակներում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա լրացնել առկա ֆինանսական միջոցներով նախատեսված գումարի չափը, իսկ ընդհանուր գումարը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:*

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | արձագանքը ֆինանսական հաշվետվությունների մակարդակով գնահատված ռիսկերի նկատմամբ և պնդումների մակարդակով գնահատված ռիսկերին արձագանքելու նպատակով մշակի և իրականացնի աուդիտի լրացուցիչ ընթացակարգեր:<br>զ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 402-ի (Սպասարկող կազմակերպության ծառայություններից օգտվող կազմակերպությունների վերաբերյալ աուդիտորական դիտարկումներ)՝ այն դեպքերում, երբ տվյալ կառույցի գործառնությունների մի մասն իրականացնում է ծառայություններ մատուցող երրորդ կողմը, ապա աուդիտորը աուդիտի գործընթացի ժամանակ պետք է ներառի ծառայություններ մատուցող ընկերության ներքին հսկողության միջավայրին վերաբերող նկատառումները և գնահատականները:<br>է) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 580-ի (գրավոր հավաստումներ)՝ որպես աուդիտի գործընթացի բաղկացուցիչ՝ աուդիտորը ընկերության ղեկավարությունից կամ, համապատասխան դեպքերում, կառավարող մարմնից պետք է ստանա աուդիտի փաստ արձանագրող նամակ:<br>**Աուդիտորական հաշվետվություններ**<br>Աուդիտորը պետք է ներկայացնի անկախ աուդիտորական եզրակացություն 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ նշելով, թե արդյո՞ք այդ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ ճշմարիտ պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:<br>Բացի դրանից, աուդիտորը պետք է իր աուդիտորական հաշվետվության մեջ առանձին մասով ներկայացնի «Այլ իրավական և կարգավորող պահանջների վերաբերյալ հաշվետվություն»:<br>Ի հավելումն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության, աուդիտորը պետք է պատրաստի նաև ղեկավարությանն ուղղված նամակ, որում  աուդիտորը անհրաժեշտության դեպքում պետք է.<br>ա) ներկայացնի աուդիտի ընթացքում ուսումնասիրված հաշվապահական գրանցումների, համակարգերի և ներքին հսկողության մեխանիզմների վերաբերյալ իր մեկնաբանություններն ու դիտարկումները,<br>բ) նույնականացնի համակարգերի և հսկողության մեխանիզմների թերություններն ու թույլ օղակները և կատարի դրանց բարելավմանն ուղղված առաջարկներ,<br>գ) ներկայացնի այն խնդիրները, որոնք ի հայտ են եկել աուդիտի ընթացքում, աուդիտորի տեսանկյունից կարևոր են և կարող են էական ազդեցություն ունենալ հիմնադրամի գործունեության վրա,<br>դ) ղեկավարությանն ուղղված նամակում ներառի ղեկավարության արձագանքները,<br>Եթե վերը նշվածին համապատասխան առաջարկներ չկան և ղեկավարությանն ուղղված նամակ չի պատրաստվել, ապա աուդիտորը պետք է գրությամբ հավաստի, որ աուդիտորի կողմից աուդիտի ընթացքում ուշադրության արժանի ոչինչ չի բացահայտվել:<br>**Ընդհանուր**<br>Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ ներառյալ տեղեկատվության բավարար բացահայտումը, պատասխանատու է «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությունը: Սա ներառում է համարժեք հաշվապահական գրառումների պահպանումը և ներքին հսկողության իրականացումը, հաշվապահական քաղաքականության ընտրությունն ու կիրառությունը և ընկերության ակտիվների պահպանումը: Որպես աուդիտի գործընթացի մաս՝ աուդիտորները պետք է ղեկավարությունից պահանջեն և ստանան գրավոր հաստատում՝ տրամադրված տեղեկատվության վերաբերյալ: Աուդիտորի համար առանց սահմանափակումների հասանելի կլինի ամբողջ տեղեկատվությունը և աուդիտորին կտրամադրվեն աուդիտի իրականացմանը նպաստող բոլոր պարզաբանումները, ներառյալ իրավական փաստաթղթերը, իրականացված ծրագրերի նախապատրաստման և վերահսկողության հաշվետվությունները: Աուդիտորը կարող է նաև պահանջել Բանկային գրանցումներում արտացոլված գումարների հատկացման և մնացորդների վերաբերյալ գրավոր հաստատումներ: |

| | |
|---|---|
| **Կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը** | **«Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետ** |

| | | | |
|---|---|---|---|
| **Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը** | | **25/01/2024թ.** | |
| **Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը**[4] | **1** | | |
| | **...** | | |
| **Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը** | | **Հարցարդման ստացման** | **Պարզաբանման** |
| | **1** | | |
| | **...** | | |

| **Հ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **Յուրաքանչյուր մասնակցի հայտով, ներառյալ միաժամանակյա բանակցությունների կազմակերպման արդյունքում ներկայացված գինը /ՀՀ դրամ**[5] | | |
|---|---|---|---|---|
| | | **Գինն առանց ԱԱՀ** | **ԱԱՀ** | **Ընդհանուր** |
| **Չափաբաժին 1** | | | | |
| 1 | «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈւԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | 1600000 | 320000 | 1920000 |
| 2 | «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ | 1200000 | 240000 | 1440000 |

**Տվյալներ մերժված հայտերի մասին**

| **Չափա-բաժնի համարը** | **Մասնակցի անվանումը** | **Գնահատման արդյունքները (բավարար կամ անբավարար)** | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը** | **Հայտով ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին** | **Առաջարկած գնման առարկայի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին** | **Գնային առաջարկ** |
| **1** | | | | | |
| **...** | | | | | |
| **Այլ տեղեկություններ** | | **Ծանոթություն՝** Հայտերի մերժման այլ հիմքեր | | | |

| | | |
|---|---|---|
| **Ընտրված մասնակցի որոշման ամսաթիվը** | **01/02/2024թ.** | |
| **Անգործության ժամկետ** | **Անգործության ժամկետի սկիզբ** | **Անգործության ժամկետի ավարտ** |
| | **02/02/2024թ.** | **11/02/2024թ.** |
| **Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման ամսաթիվը՝  15/02/2024թ.** | | |
| **Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվելու ամսաթիվը** | **21/02/2024թ.** | |
| **Պատվիրատուի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթիվը** | **21/02/2024թ.** | |

| **Չափա-բաժնի համարը** | **Ընտրված մասնակիցը** | **Պայմանագրի** | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | **Պայմանագրի համարը** | **Կնքման ամսաթիվը** | **Կատարման վերջնա-** | **Կանխա-վճարի** | **Գինը** |
| | | | | | | **ՀՀ դրամ** |

[4] Նշվում են հրավերում կատարված բոլոր փոփոխությունների ամսաթվերը:
[5] Եթե առաջարկված գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա գները լրացնել  տվյալ հրավերով սահմանած փոխարժեքով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

| | | | | ժամկետը | չափը | Առկա ֆինանսական միջոցներով | Ընդհանուր[6] |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ | «ՇԲՕ-ԳՀԾՁԲ-24/6» | 22/02/2024թ. | Պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու ամսվա ընթացքում | - | | 1440000 |

**Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն**

| Չափա-բաժնի համարը | Ընտրված մասնակիցը | Հասցե, հեռ. | Էլ.-փոստ | Բանկային հաշիվը | ՀՎՀՀ[7] / Անձնագրի համարը և սերիան |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ | ք. Երևան, Մաշտոցի 7<br>010-524-724 | perfectaudit@bk.ru | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1930046450680100 | 02591995 |

| | |
|---|---|
| **Այլ տեղեկություններ** | **Ծանոթություն՝** Որևէ չափաբաժնի չկայացման դեպքում պատվիրատուն պարտավոր է լրացնել տեղեկություններ չկայացման վերաբերյալ: |

Ինչպես սույն ընթացակարգի տվյալ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք, կարող են ընթացակարգը կազմակերպած պատվիրատուին ներկայացնել կնքված պայմանագրի տվյալ չափաբաժնի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ՝ սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում:

Գրավոր պահանջին կից ներկայացվում է՝

1) ֆիզիկական անձին տրամադրված լիազորագրի բնօրինակը: Ընդ որում լիազորված՝

ա. ֆիզիկական անձանց քանակը չի կարող գերազանցել երկուսը.

բ. ֆիզիկական անձը անձամբ պետք է կատարի այն գործողությունները, որոնց համար լիազորված է.

2) ինչպես գործընթացին մասնակցելու պահանջ ներկայացրած, այնպես էլ լիազորված ֆիզիկական անձանց կողմից ստորագրված բնօրինակ հայտարարություններ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված շահերի բախման բացակայության մասին.

3) այն էլեկտրոնային փոստի հասցեները և հեռախոսահամարները, որոնց միջոցով պատվիրատուն կարող է կապ հաստատել պահանջը ներկայացրած անձի և վերջինիս կողմից լիազորված ֆիզիկական անձի հետ.

4) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունների և լրատվական գործունեություն իրականացնող անձանց դեպքում՝ նաև պետական գրանցման վկայականի պատճենը:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեն է emergency103@gmail.com

| | |
|---|---|
| **Մասնակիցների ներգրավման նպատակով <Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները** | Գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղադրվել են gnumner.am կայքում |
| **Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը** | Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել |
| **Գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները** | Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել |
| **Այլ անհրաժեշտ տեղեկություններ** | |

**Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող**

| Անուն, Ազգանուն | Հեռախոս | Էլ. փոստի հասցեն |
|---|---|---|
| **Կ.Սարգսյան** | **/010/ 53-72-41** | **karine.sargsyan@1-03yerevan.am** |

**Պատվիրատու՝ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ**

---

*[6] Եթե պայմանագիրը կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա ընդհանուր գինը լրացնել «Ընդհանուր» սյունակում, իսկ առկա ֆինանսական միջոցների մասով՝ «Առկա ֆինանսական միջոցներով» սյունյակում:*

*[7] Չի լրացվում, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողի հաշվարկային հաշիվ չունեցող անձը:*